


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար օրհիմ. աղջ դ՛հ. 30
" " վեցամսեայ " 50
Օս առ երկրեան օրհիմն Ծրագի 25
" " վեցամսեայ " 14
Թղթաօտի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղուած նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի օրուի :

ՈՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Տրէյֆիւս-Էսթերազիի խնդիրը որ կը շա-
րունակէ յուզել և երկպառակել Պրանսան,
տխուր տպաւորութիւններու առկա կը ճնշէ մե-
զի որ արդարաւորութեան և ազատասիրու-
թեան անձկակարօտ մեր երազանքներուն մէջ
կը փայտայենք Պրանսայի քաղցրանոյշ պատ-
կերը, — առանց Հանթօյի, — իբր յուսատու
ամէն զրկուածներու, ամէն տառապեալներու :

Մեզի համար ո՛չ Տրէյֆիւսն է հիմա
խնդրի առարկան, ո՛չ Էսթերազին, այլ ար-
դարութեան դադափարը : Հրեայ սպան գուցէ
անիրաւութեան զոհ մը եղած է, կաթողիկ
սպան կրնայ դաւաճան մեքենայութիւններու
առարկայ դառնալ, ո՛չ մէկ ո՛չ միւս պարա-
դային մէջ արտակարգ երեւոյթի մը հանդի-
սատես եմք : դատական սխալները անբաժան
են մարդկային սխալական բնաւորութենէն :
արտակարգ երեւոյթը ան է որ 1789ի Պրան-
սան խղզել ուզէ արդարութեան ձայնը : Կրօ-
նական անձնասիրութեան խնդիր մը եղած է
Տրէյֆիւս-Էսթերազիի գործը : Եթէ Տրէյֆիւս
անիրաւ դատապարտեալ մըն է, ուրեմն մատ-
նիչը Էսթերազին է : Եթէ այս վերջինս զոհ է
մեքենայութեան, մեղաւորը միւսն է ուրեմն :
և որովհետեւ մէկը հրեայ է, միւսը կաթո-
լիկ, ուստի և անպատուութիւնը ամբողջ հրե-
ութեան կամ կաթողիկոսութեան կը վերագրուի :
Մենամարտը արդարութեան և անարդարու-
թեան միջեւ չէ, այլ կրօնքի և կրօնքի : Շատ
ապշեցուցիչ չէ՞ մեզի պէս խեղճուկ արեւել-
ցիներուն համար իսկ ԺԹ դարուն վերջին օ-
րերը Ազատութեան Մայր-Հայրենիքի, Պրան-
սայի մէջ ասանկ պաշտօնութիւն մը :

Պրանսայի մամուլին բոլոր բաժանումնե-
րը չենք կարող թուել այս տեղ, բայց նկա-
տողութեան առնենք միայն քանի մը կարե-
ւոր թերթերու ընթացքը :

Կոշուա և Էֆօ Տր Բարի հրեայ տնօրէն-
ներու յանձնուած են : այդ երկու թերթերն
ալ շերմապէս կը հակառակին Տրէյֆիւսի : և
ամէն ջանք կընեն որ հաճելի ըլլան հակա-
հրեական դատին պաշտպաններուն, եթէ ոչ
«դուք ալ հրեայ էք» պիտի պոռան իրենց ե-
րեսին, և թերթերը պիտի գլտորին :

Ֆիկաուօն պահպանողական—կաթողիկ
թերթ է, բայց սաստկապէս հակառակեցաւ
Էսթերազիի որուն դէմ անողք կոխ մղեց :

և ահա օր մը տնօրէնը հարկադրուեցաւ առ-
ժամեայ կերպով հրաժարիլ իր պաշտօնէն ու
մեկուսանալ Պեղիա, վանքի իր կաթողիկ
ընթերցողները զայրացած էին և տարեգլխին
բաժանորդագրութիւնները մեծաքանակ պակ-
սելու երկիւղը կար : Ֆիկաուօյի նման թերթ
մը եթէ 10,000 բաժանորդ կորսնցնէ, կը սարսի-
նուի : Եւ ուշադրաւ պարագայ : Էսթերազի բուն
Պրանսայի մը չէ, այլ մաճառ մը և իր աղ-
գականները կը բնակին Պուտա-Բէշթ, ուրեմն
Պրանսա իր աղգային անձնասիրութեանը մէջ
իսկ զգաժուելու փորձութեան չենթարկուիր
եթէ երբէք Էսթերազին ոճրագործ մը հուշակ-
ուի : Բայց կրօնքը կար : Կրօնքի թէ Պրան-
սայիներուն մեծամասնութիւնը դեռ աւելի
կաթողիկ է քան թէ Պրանսայի : Եւ շատ ալ
չի զարմանա՞նք : Պրանսայի մէջ կաթողիկոս-
ութիւնը տասը դարէն աւելի է գետնադրուած է
ու կեանքի էական մաս կը կազմէ : Իսկ հայ-
րենասիրութիւնը նորամուտ է, հազիւ մէկ
դարու ծնունդ է դեռ : Վրթէր կուրախանար
Բուսիոյ Պրէտէրիկ Բ.ի Պրանսայի վրայ տա-
րած յաղթանակներուն համար «ուր իմաս-
տասիրութիւն» հոն հայրենիք : Պրանսայի վրայ
յարձակող աւստրիական և բրուսիական բա-
նակներ 1792ին կառաւորուեցին Պրանսայի
ազնուականներէն : «ուր թագաւորը» հոն հայ-
րենիք : Արման Բարէլ, Պրանսայի մեծամուն
հրապարակադիրը դարուս առաջին քառորդին
կը միանար սպանիական զօրքերուն ընդդէմ
Պրանսայի «ուր ազատութեան դատը» հոն հայ-
րենիք :

Ու Արդարութեան հայրենիքը :

Ծ Ա Ղ Կ Ե Մ Ա Ր Տ

Աւասիկ մեր ստացած առաջին պատասխանները :

Ծաղիկի սիրահար և միեւնոյն տոնէ բորեպաշտ
քրիստոնեայ մըն եմ : Ծաղիկն և եկեղեցիին մէջ
այնքան անուշ, այնքան սուրբ ներգաշնակութիւն
մը կայ որ կը զարմանամ թէ կը գտնուին մարդիկ
որ չեն ըմբռնիր թէ ի՞նչպէս կարելի է տաճարի մը
ներս մտնել boutonniereիդ անցուցած maréchalé
ney մը կամ տրձակ մը մանուշակ :

Եթէ ծաղիկը աստուածահաճոյ բան մը չըլլար,
Ստեղծողը փոխանակ անոնցմով զարդարելու դրախ-
տը, Բարովիսէ առապեալ կարասիներ կը գնէր :

Եւ ի՞նչ կայ ծաղիկէն աւելի մաքուր, աւելի
սուրբ բան մը : Կոյսին պարկեշտութիւնը մանուշա-
կին կը նմանցնեն և այստեղ վարդին : Կեանքի մէջ
մտնողին հարմին, ծաղիկ կուտանք և կեանքը ձգող
գայողին՝ մեռելին, դարձեալ ծաղիկ : Խորանք ծա-
ղիկներով զարդարուած է և միւռոնը ծաղիկներէ կը
չինուի :

Եթէ եկեղեցիին մէջ անպատեհութիւն մը կայ
ա՛հ ալ Թապալս պտտցնենք, թողականներուն
չալըմն է, բարձր ձայնով խօսինք է և ոչ թէ ծա-
ղիկ դնելը :

Եւ կարճը կուգէ՞ք. ծաղիկը կամ տերեւը մար-

դուս մեղքը և ամօթը պարտկող բան մըն է : Օրինակ
ձեզի Նաւն : Իսկ եթէ խորը թափանցել ուզենք
ես պիտի ըսեմ թէ աւելի վայելուչ և շատ աւելի
քրիստոնեայել է բաճկոնակին վրայ ծաղիկ ունենալ
քան թէ գրպանին մէջ դրամ : Ծաղիկի համար եր-
բէք ոճիր մը չէ գործուած ի բայ առեալ... Նորն-
ջենիի ծաղիկները :

Մինչեւ հիմայ հայերը ծաղիկ չեն դնել եղեր
երբ ժամ կերթան : Ասիկայ տղեղ նախապաշարու-
մըն է որ ուրիշ շատ մը նախապաշարութեան պէս
մէկ կողմ նետելու է :

ԴԱՐՈՒՍ ՄԵԿ ԶԱՒԱԿԸ

Ծաղիկներու շուրջը այդքան աղմուկ հանելու
տեղը չկայ : Ծաղիկ դնելը... անշուշտ հազար ան-
գամ աղէկ է... ծաղիկ հանելէ :

ՆԵՍՊՈՐ

Եթէ ես թաղական ըլլայի՞ ծաղիկ դնողներուն
համար ալ տակաղին մը կը հաստատէի և խնդիրը
ինքնին կը լուծուէր :

Եւ կը զարմանամ թէ ի՞նչպէս եղեր է որ այդ
պարագայ մեր առաջնորդարանի chancellerieին
ուշադրութենէն վրիպեր է :

Ամուսնութիւնները՝ սակազինով արգիլուեցան,
ծաղիկ դնելը եթէ արգիլել կուզեն թո՛ւ սակազին
մը չինեն :

ՉԱՆՉԱՆ

ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ «ԱՂՔԱՏԱՆԱՄ»Ը

Աղեքսանդրիայէն կը հաղորդեն մեզ :

Աղքատութեամբ ընկերութեան ընդհանուր ժողովն
ի նիստ գումարուեցաւ ամսոյ 21ին, ուրաթ գիշեր,
35 անդամներու : Ներկայութեամբ : Նախ և առաջ
կարդացուեցաւ առժամեայ Գանձաժողովին կողմէ
պատրաստուած կազմական նոր կանոնադիրը և քանի
մը թեթեւ փոփոխութիւններով ընդունուեցաւ : Ի
վերջոյ կատարուեցաւ զիւստի ընտրութիւնը և քուէ-
ներու բացարձակ առաւելութեամբ ընտրուեցան :

Տեարք՝

Արքայաւ պէյ Բարթոլ	Ա. Ասեմապէս
Գրիգոր Միլլենեան	Բ. " "
Լեւոն Ստեփան	Ա. Ասեմապէս
Միհրան Թէլեան	Բ. " "

Յետոյ, Տնօրէն Խորհրդոյ ընտրութեան ձեռնար-
կուելով, բացարձակ առաւելութեամբ քուէ չահեցան :

Տեարք՝

Տոբթ. Ժամկոչեան
Յովհաննէս Շնորհքեան
Եղուարդ Թորոքեան
Յովսէփ Զպուքեան
Պերճ Օհանեան
Լեւոն Պէրպէրեան
Աարուսի

Ժողովը, ցրուելէ առաջ, շնորհակալութեան քուէ
տուաւ առժամեայ Գանձաժողովին իր խղճալիտ
աշխատութեանը համար : Աղքատութեամբ նորա-
կազմ դիւանը ու տնօրէն խորհուրդը ամեն յոյս կը
ներշնչեն թէ ընկերութեան գործերը բարձր վի-
ճակի մէջ պիտի կրնան դնել ընդհուպ և տարակոյս
չունինք որ Աղեքսանդրիոյ հայ հասարակութիւնն ալ
բաւարարող պիտի հանդիսանայ անոր աւելատանուէր
ջանքերուն :

ՊԱՏՐԻԱՐԲԻՆ ԽՆԴՐԱՆՔՆԵՐԸ

Օրոմանեան Պատրիարքը՝ Քաղաքական և Կրօնական Ժողովներուն հետ համախորհուրդ ընդարձակ յիշատակագիր մը մատուցած էր Սուլթանին, մէկիկ մէկիկ թուերով այն թողութեան իմաստներն ու անկողնային թուերն որոնց անկողնային պէտք ունի Ազգային արդի քաղաքականութեան արգահատելի կացութեան ի դարձան։ Միանգամայն, փոփոխութեամբ զգացուցեալ տուած էր թէ՛ Պալատը և թէ՛ Դուռը, որ առանց անոնց ընդունելութեան ու գործադրութեան՝ անկարելի կըլլայ Հայոց Պատրիարքին իր պաշտօնը վարել։ Թէեւ տակաւին որեւէ զբաղան ու նպատակ արտաքին առնուած չէ, սակայն Պոլսոյ վերջին Սուրհանդակով հասած ազգ. թերթերը լաւատես անկարկութիւն մը կը պարունակէին, յայտնելով թէ Սուլթան օրը պաշտօնատար մը Պատրիարքարան երթալով ինչ ինչ գոհացուցիչ տեղեկութիւններ հաղորդէր և Պատրիարքին՝ ի մասին յարաբերական խնդրոց և աւելցունելով թէ մոյն պաշտօնատարը յոյս տուեր է յաջորդ օրն ևս գոհացուցիչ զեկուցում մը ընել ի մասին մատուցեալ խնդրանքներուն։

Սպասելով այդ բերանացի յայտարարութեանց ու խոստումներու իրականացման, և պաշտօնապէս ու գրաւորապէս հաստատուելուն, կը փութանք թարգմանել պատրիարքական յիշատակագրին հիմնական կէտերը զորս Աթանա Հափսի Կ. Պոլսոյ թղթակիցը հաղորդած է երոպական թերթերուն։

Ազգին մէջ ընդհանուր հանգանակութիւն մը կատարելու արտօնութիւն, ի նպաստ վնասուած հայերու և մասնաւորապէս որբերուն, որոնց թիւն ու կարօտութիւններն անհամեմատ աւելի մեծ են մինչեւ ցարդ հասցուած օգնութիւններուն բաղդատմամբ։

Կառավարութեան գանձէն տարեկան նպաստ մը յատկացունել Պատրիարքարանին որուն հասոյթներն զգալապէս պակսած են վերջին տարիներս, մինչդեռ պէտքերն աւելցած են։

Վերջ մը տալ ոստիկանական խստութիւններուն որոնք թէ՛ ի Կ. Պոլիս և թէ՛ գաւառները կը ջլատեն առեւտրական գործառնութիւնները ու կարգիլն հայերուն տեղէ մը ուրիշ տեղ երթալ, երկրին մէջ կամ դուրս, իրենց գործերուն համար։

Արդար և ուղիղ կերպով գործադրել այն որոշումը որ արուած էր ասկից առաջ, երկու տարուան համար յետաձգելու զինուորական տրոց գանձումը ինչպէս նաեւ գիւրութիւններ ընծայելու հայերուն՝ ուրիշ յետնեալ տուրքերու վճարման մասին։

Պետական վարչութիւններու կամ գործարաններու մէջ աշխատող հայերուն, որոնք առանց իրենց թոշակներն ստանալու աքսորուած էին իրենց գաւառները, պահանջները վճարել, ինչպէս նաեւ իրենց պաշտօններուն մէջ վերահաստատել այն հայ պաշտօնատարներն որոնք ճամբուած էին առանց պատճառի։

Պետական վարժարաններուն մէջ, ըստ առաջնոյն, ձրիաբար ընդունիլ որոշեալ թուով հայ ուսանողներ, ինչպէս կըլլայ յոյներուն, պոլիկարներուն և հրեաներուն համար։

Իրական կերպով գործադրել ընդհանուր ներումը (amnistie) որ շնորհուեցաւ նախապէս (պատրիարքական ընտրութենէն քիչ վերջը) և այդ ներումը տարածել նաեւ այն հայ յերուն վրայ որոնք Սամսոնի ու Մէրսինի մէջ նորէն բանտարկուած են։

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատկանող պէրաթներն, որոնք Մկրտիչ Կաթողիկոսի մահէն ի վեր կը մերժուին, յանձնել։

Արգիլել այն կեղեքիչ արարքներն որոնք ի գործ կը դրուին գաւառներուն մէջ, ինչպէս տեղական կամքին հակառակ։

Եւ առնել այն որոշումը որուն համեմատ նոր արտօնագիր առնելու կը հարկադրեն ազգ. վարժարաններն, որոնք ի վաղուց ունին արդէն այդ արտօնագրերը։

Ազգային-կրօնական հաստատութեանց կալուածատիրութեան իրաւունքը ճանչնալ, իրաւունք որ ոսնակովս եղած էր վերջին տեսներս։

Խղճի աղատութիւն ամենուն համար, և գլխաւորապէս այն կիներուն ու աղջիկներուն որոնք առեւանգուելով բռնադատուած էին տաճկալու և որոնք կը փախազին իրենց մայրենի եկեղեցիին գիրկը դառնալ։

Դիւրութիւն ընծայել նորոգելու կամ վերաշինելու այն եկեղեցիները, գալոյցներն ու վանքերը որոնք կործանուած կամ վնասուած են վերջին դէպքերէն, առանց հարկադրուելու վարչական մեծածախս ու երկար ձեւակերպութիւններ կատարել, ինչպէս նաեւ կարգադրել ու կանոնադրել հայ հասարակութեան ազգ. կալուածներուն վերաբերող վագֆի գործերը։

Ձեռք գրաքննութեան կամայական խըտութիւններն ի մասին Պատրիարքարանի չըրջաբերականներուն և ուրիշ պաշտօնագրերուն հրատարակման։

Ա Յ Ժ Մ Է Ո Ւ Թ Ի Ի Ն

ՌՈՒՍԻԱ՝ ԹԷ ԳԵՐՄԱՆԻԱ

Նիֆօրա Բ.ի ու Վիլհելմ Բ.ի դեսպաններն հաւասար ուժերով կը մըցին իրարու դէմ, ի Կ. Պոլիս, իւրաքանչիւր իր տեսութեան ճայնը աւելի ազդեցիկ ընել տալու համար երջոյցի պաշտք։ Եւ մինչեւ իսկ կենքադրուի թէ Յուսուսանի Եօրկոս իշխանը Կրէսէի կառավարիչ անուանելու առաջարկին շուրջ Պ. Զիմովիեմ ինքն իսկ հրապարակ հանել տուած էր, ծածկելու համար Սուրբանին հետ իր ունեցած տեսակցութեան քուն շարժառիթը որուն մէջ անյաջող ելեր է։ Ներխոճի յաջորդը, այդ ունկնդրութեան միջոցին, իր վեհապետին կողմէ մտերմական գեղոյցներ քեր է, կրսոյի, Խորհիոյ վրայէն տարազներու համար Պետրիկի դահլիճին զօրաւոր ազդեցութիւնը որուն տեղ ուսականը տիրապետած տեսնել կը փափագի։

Պաշտօնակցի մը տեղեկութիւններուն նայելով, այս դիւանագիտական խաղը խաղցուած տեսնել իսկ Սուրբանը ի ժողով գումարելով նախարարները յայտարարէր է անոնց թէ հաստատուած մտադրած է հաւասարիւ մնալ Վիլհելմ կայսեր բարեկամութեան։ Միեւնոյն ժամանակ, երկու կարեւոր հրամանագրերու հրատարակումը նոր ապացոյց մը կը նկատուի Խորհիոյ գերմանական բաղադրականութեան պահպանման։ Պ. Ռիւմովեմ Եփ, որ Պետրիկէ յաջապէս հրաւիրուելով Մալիքի խորհրդական անուանուեցաւ, Բերայի գերմանական նախապետական Եփ, Զօհն օսմ. թղթատարութեան վերաբերյի օգնական կարգուեալ է։ Սուրբանը

այս գործնական սպացոյցներով կը պատահանէ Ռուսիոյ մերձեցումներուն, եւ անհատական չէ որ ի մօտոյ կարեւորագոյն պաշտօններ եւս յանձնուին Պիզնարիի հայրենակիցներուն։

Ասոնք բոլորը պատճառ մը չեն տալայն որ Պ. Զիմովիեմ ընկրկի իր առջեւ գծուած բաղադրականութեան մէջ, որո մասին այնքան յուսալից բաներ քառեցան իր ընտրութեան օրէն իսկ. Պ. Ֆոն Մարշալ ալ կը շարունակէ օգտուիլ պարագաներէն որոնք նպաստաւոր են Գերմանիոյ։ Այս պայմարի մեջտեղ, Կրէսէի կացութիւնը կը մնայ անորոշ ու շատ յոյս չի տալ բարոյութեանը։ Չարին ու Բայզերին ներկայացուցիչներուն քանակէրը ո՛չ թէ կը ձգտին կողմին ինքեօրինութիւն մը տալ, այլ իրարու վրայ գերակշիռ հանդիսանալու։ որի՞ն պիտի մնայ յաղթանակը. թուրքին ճկունութիւնն ու ճարտար ուսմանները դեռ երկար տեսնել կրնան օրօրէն երկուքն ալ իրենց ընդհանրութեան մէջ։

ՏՐԷՅՅԻՒՍԻ ԽՆԴԻՐԸ

Տրէյֆիսի գործը տաղնապալի երեւոյթներ առաւ շարժում սկիզբը, հակահրէական ցոյցերու տեղի տալով Աւստրիոյ մէջ, մինչ Բարիք, խորհրդարանին մէջ, երեսփոխաններն իրար ձեռքու կելլելին, անշուշտ վար չի մնալու համար Աւստրիոյ խորհրդարանի անդամներէն։ Հարցաւորման մը միջոցին ընկերվարական երեսփոխան Ժոզէս Բարդախի կողմէ արհաւիրական երեսփոխան Պէրնար օր աւոր վրայ յարձակեցաւ։ Շփոթութիւն մը ծագեցաւ ու կուռփի փոխադարձ հարուածներ տեղացին ժողովականներուն միջեւ։ Ունկնդրութեան օրհանգի մէջ ալ ժողովուրդը երկու մասի բաժնուելով, իրարու վրայ յարձակեցաւ։ Ըրազաց ոքոքիւրներն ալ իմաստաբար անուան մնալ չի պիտի ուզէին ու անոնք ալ քանի մը հարուած իջուցին իրարու։ Ատենը փակուեցաւ անկարագրելի խռովականութեան մը մէջ։

Այս դէպքին օրը, շարժ, ու գիշերը, մայրաքաղաքին զլխաւոր փողոցներն ու հրապարակները հսկողութեան տակ առնուեցան նորանոր ցոյցեր արգիլելու համար։

Աւստրիոյ մէջ, հրեաներուն խանութներն աւարի տուեցան, և բաւական թուով մարդիկ մեռան ու վիրաւորուեցան։ Թէեւ հեծեալազօրքը հրացանի բռնեց ցուցարարները, սակայն անկարող եղաւ հակահրէական շարժումին առաջն առնել։ Վերջին հեռագիրներու նայելով, հանգարտութիւնը քիչ մը վերահաստատուեալ է։

* * *

Ճրանսական Խորհրդարանը երկուշաբթի շաբաթակերպով իր շաբաթ օրուան նիստը, որ կապաւորուած ընդհատուած էր, 133ի դէմ՝ 376 ձայնով վստահութեան նոր բռն մը տուաւ նախարարութեան, Պ. Բալէնեաքի հարցաւորման վրայ բացուած վիճարկութեան առթիւ։

Այս քուէն բաւական պիտի ըլլայ ժողովուրդին միտքն ու լրագրութիւնն հանգարտեցնելու տարակուսելի է։

Այն պահուն իսկ, որ Ճրանսայի երեսփոխանութիւնը այս քուէն կուտար, Պէրնարի խորհրդարանին մէջ Կերմանիոյ արտաքին գործոց նախարար Պ. Պիւլով կը յայտարարէր թէ Տրէյֆիս օրէն յարաբերութիւնն ունեցած չէ գերմանացի գործակալներու հետ։ Արեւմտ, կը հեռուցուեն, խնդրոյ առարկայ եղող տեղութիւնը որուն յատկաձեւեր ծախած ըլլալու դատապարտութեան տակ կը գտնուի նախկին հարկաւարտը, Ռուսիան է։ Ահա՛ աւանդակ մը որ կրնայ բարոյութիւն յեղաշրջել խընդրին գոյնը։

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն կը հաղորդեն թէ Թուրքիոյ և Յունաստանի միջեւ մասնաւոր դաշնագրերու (հիւպատոսական, առեւտրական և այլն) կընքման բանակցութիւնը յետաձգուեր են, վասն զի հելլէն կառավարութիւնը կը դանդաղոր Դրան ծրագրին 55 կէտերը հակառակ են այն սուանձնաշնորհմանց զորս հաշտութեան նախնական պայմանագիրը կուտայ Յունաստանի :

—Կրէտէի ընդհանուր ժողովը դարձեալ բողոքագիր մը ուղղել է մեծ Տէրութիւններուն, այն լուրին առթիւ թէ կղզին ինքնօրէն վարչութեան մը վերածուելու տեղ առանձնաշնորհեալ նահանգ մը պիտի նկատուի և օսմ: զօրքերը պիտի պահուին հոն: Այս տեսակ որոշում մը որ հակառակ է Տէրութեանց և նոյն իսկ Դրան յայտարարութիւններուն, յարաճուն գրգռում կը պատճառէ, կըսեն, ժողովուրդին որ արդէն իսկ յուսահատած է անընդհատ ձգձգումներէ և անոնց հետեւանք եղող տառապանքներէ :

—Լոնտոնէն հեռագիր մը մտահոգութիւն կը յայտնէ Պ. Կլատթօնի առողջական վիճակի մասին: Մեծանուն ծերունին ջղացաւութենէ կը տառապի ու սաստիկ տկարացած կը գգայ ինքզինքն այս միջոցիս :

—Թուրքիոյ նաւատորմը զօրացնելու անսովոր գործունէութիւն մը կը տիրէ ի Կ. Պոլիս: Թալլիզին տեղեկութեանց նայելով, ծովային նախարարն առաջարկել է՝ Քրիւքի գործարանին յանձնել օսմ. ութ զրահաւորներու սպառազինման գործը: Սուլթանը թէեւ հաւանք է, բայց իրատէն ելած չէ տակաւին: Միւս կողմէ, բանակին վերաբերող զէնքերն ու պիտոյքներն ալ Գերմանիոյ յանձնարարուած են ու կը հասնին հետզհետէ :

ԱԶԳԱՅԻՆ

Պոլսոյ Կրօնական Ժողովը որոշել է անմիջական կերպով եպիսկոպոսական վկայագիր տալ Պատրիարքական փոխանորդ Տ. Գաբրիէլ Ծ. Վ. ձէվահիրճեանին, իզմիրի առաջնորդ Տ. Ներսէս Ծ. Վ. Ապլանեանին և Կեսարիոյ առաջնորդ Տ. Տրդատ Ծ. Վ. Պալեանին, յառաջիկային վերապահելով ուրիշ երկու-երեք արժանաւոր վարդապետներու եպիսկոպոսական վկայագրին յանձնումը: Եթէ չենք սխալիր, այդ արժանաւորներէն մէկն ալ Եգիպտոսի առաջնորդական տեղապահ Տ. Յակոբ Ծ. Վ. Աշոտն է: Ինչո՞ւ այս յետաձգումը կամ խտրութիւնը :

Հանգուցեալ Թագուր փաշայի որդին Լեւոն պէյ Յակոբեան ու մայրը Եւրոպայէն Աղեքսանդրիա եկան անձամբ հսկելու համար յիշատակարանի մը կառուցման՝ Թագուր փաշայի գերեզմանին վրայ: Մասնագէտ ձեռնարկու մը կընկերանայ անոնց: Յիշատակարանը հոյակերտ շինուած մը պիտի ըլլայ և պիտի ունենայ իր մէջ մատուռ մը :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍԾ

Յառաջիկայ երկուշաբթի, 19/31 յունվար, հանգուցեալ Պոլսոյ էֆէնտի Կարապետեանի մահուան քառասնօրէին առթիւ, յատուկ պատարագ և պաշտօն պիտի մատուցուի քաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ:

Պատարագը, զոր պիտի մատուցանէ Առաջնորդական Տեղապահ Հայրը, պիտի սկսի ժամ 10ին :

Հանգուցելոյն ընտանեաց կողմէ կը ծանուցուի ազգականաց և բարեկամաց թէ ներկայս պէտք է իբր հրաւիրագիր նկատել:

ՏԵՂԱԿԱՆ

Անգլիոյ Թագուհւոյն հրկրորդ որդին՝ Սաքս-Գոթա-Կոլբի դուքսը՝ երէկ Աղեքսանդրիա հասաւ բրիտանական Սըրքսայզ մարտանաւով և ընդունուեցաւ Խորվիկն առաջին թիկնապահ Ահմէտ Ձէքի փաշայի կողմէ որ յատկապէս ընդառաջ գացած էր: Ն. Բարձրութիւն այսօր Գահիրէ կը հասնի ուսկից Հէլլան պիտի երթայ, հինգ-վեց շաբաթ այնտեղ մնալու օգտփոխութեան համար:

—Գահիրէի գերմանական գաղթականութիւնը վաղը կը սօնէ Վիլհէլմ Բ. կայսեր ծննդեան 40րդ տարեգարձը:

—Լորտ Քրոմըր առջի օրը երկար տեսակցութիւն մը ունեցաւ նախարարապետ Մուսթաֆա Ֆէհմի փաշայի հետ:

—Իտալական Ռիւպալթինօ ընկերութիւնը մարտ ամիսէն շոգենաւային կանոնաւոր երթուեկութիւն մը պիտի հաստատէ Աղեքսանդրիոյ ու Նաբօլիի միջեւ: Այս ուղեւորութիւն պիտի կատարուի 63 ժամէն:

—Աղեքսանդրիոյ մէջ, Պ. Ալտէրսընի նախաձեռնութեամբ կազմուած դրամատէրներու խումբ մը հետամուտ է գնել Խորվիկէի շոգենաւները: Պ. Ալտէրսըն երէկ Գահիրէ եկաւ Սըր Է. Բալմօրի հետ բանակցելու:

—Բոսորէ հետեւեալ զուարճալի լուրը կուտայ վերապահութեամբ.

Ալճէրիացի մը Պ. Ճօն Ռօսի դիմելով, Աղեքսանդրիա, յայտարարել է թէ Ասիոյ զաւառին Տէյրութ գիւղին մէջ գանձ մը կայ և թէ ինք ճշդիւ գիտէ անոր պահուած տեղը: Միայն թէ, այդ գանձը ժայռի խոշոր կտորներու տակ թաղուած ըլլալուն, տրինամիթով օգը հանելու է զանոնք: Պ. Ռօս կառավարութեան դիմելով, համաձայնութիւն գոյացուցել է որ գանձին կէսը տէրութեան պիտի պատկանի և կէսը իրեն ու Ալճէրիացիին: Կառավարութիւնն ալ իր կողմէ ներկայացուցիչ կարգեր է Ապաէլ Պաքի պէյը:

—Եգիպտոսի մէջ այս ձմեռ տիրող անսովոր ցուրտին վրայ ուսումնասիրութիւն մը հրատարակած է Պ. Ուօլթըր Տրաբեր Էնիթը Յագէթի մէջ ուսկից կը քաղենք սա շահեկան մասը.

«Վերին Եգիպտոսի ուղեւորները կը խօսին Լուքսորի մէջ և ուրիշ տեղեր տիրող ցուրտին վրայ: Ֆէյումի մէջ ձիւն տեղաց, և անոր նման բան մին ալ խառնուած էր անձրեւին ու կարկուտին ի Բօս Սայիտ Տէլթային բերանը սառ տեսնուեցաւ. վերջապէս ի Հէլլան, դեկտ. 30ի առաւօտուն, օդաշափը

զէրօէն վար 3 աստիճան կը ցցունէր: Երկաթուղիով քաղաք իջնող ուղեւորները կը հարցունէին իրարու թէ Հէլլանի ու Գահիրէի միջեւ, անապատին մէջտեղ նշմարուած սպիտակ կոյտերը ձիւն էին արդեօք:

«Այս անսովոր ցուրտը իր վնասներէ հետեւանքներն ունեցաւ երկրին բուսականութեան ու հողային արտադրութիւններուն համար»:

—Պէնի Սուէֆի դատարանին դեր-նախագահը Ասիոյ պիտի փոխադրուի, որուն դեր-նախագահը Գահիրէի դատարանը կոչուած է Մուհամմէտ պէյ Մուհրիզի տեղ որ Պէնի Սուէֆի դեր-նախագահ անուանուած է:

—Մէսածըրի Օսեանիէն շոգենաւով որ Ջինաստան ու Ճարն կուղեւորի, Բօս Սայիտ հասած են հարիւր Սէնէկայիներ որոնք ծիւ պութի պիտի երթան Օրէնտի Հանրի իշխանին սպասելու և անոր ձեռքին տակ աշխատելու համար Հապէշիտանի մէջ: Պ. Լէոն-թիէֆի հետեւորդներն ալ Օսեանիէն Աղեքսանդրիա եկած են և Բօս Սայիտ պիտի երթան: Հանրի իշխանը և Պ. Լէոնթիէֆ ի մօտոյ Եգիպտոս կը սպասուին:

—Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպան Պ. Ան. ճէլ ու տիկինը յառաջիկայ շաբաթ օր Աղեքսանդրիա կը հասնին ուսկից Գահիրէ պիտի գան ուղեւորութիւն մը կատարելու համար Նեղոսի վրայ ու Վերին Եգիպտոս այցելելու:

—Երէկ առաւօտ ժամ 6ին Մաթարիայէն մեկնող կառախումբը Գոլպպէի կայարանին մօտ այն գծին վրայ անցաւ ուսկից կուգար Գահիրէի կառախումբը: Մեքենավարը անդարդաւնալով, խօսին կէցոյց վայրաշարժը ու դէպի ետ ուղղեց իր առջի անդը գնալու համար: Կը պատմեն թէ արժանողը կը քնանար այդ միջոցին և մեքենավարն ինք կատարել է գիծը փոխելու գործողութիւնը:

—Պատերազմական նախարարը զինուորական յանձնախումբ մը կազմել է պաշտօն տալով անոր Պէրպէրի նահանգին մարդահամարը կատարել, Մէրսիլին և Ապու Համէտն ալ միասին: Քառալայի մարդահամարը պիտի կատարուի ի մօտոյ:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ա.Լ.Թէ, 25 յունուար. — Կիրակի օրուան ցուցերու միջոցին մեռած բրիտանիկ թաղումը նորա, նոր չփութութեանց տեղի տուաւ: Հրեաները դարձեալ յարձակում կրեցին. առնողմէ մէկը մեռաւ ստացած հարուածներէն:

Պոլսոյ Բիզանդիոն օրաթերթին մէջ կը կարդանք.

Սաաթքի նախկին խմբագիր և բաժնետէս Գէտ Տիրան Էֆ. Քէլէկեան, ի վարձ այն բարեր ծառայութեանց զոր երկար տարիներէ հետէ մատուցած է երկրին և Տէրութեան, այս անգամ քարտուրարական կարեւոր պաշտօնի մը կոչուած է խորհրդի խոստայի կայսերական վարչութեան մէջ:

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

Ի՞նչ բանի վրայ կը մտածեն կիները: Կնոջական հոգեբանութեամբ կամ քմաճին նիւթերով զբաղող գրիչներ զրթեմէ ամենքն ալ մէջտեղ դրած են այս հարցումը:

Այս անգամ, անգլիական հանդես մըն ալ սա պատասխանները կը հրատարակէ իր կողմէ .

Չորս տարեկան եղած ատեններն, չարաբեղէններու վրայ կը մտածեն : Եթէ տարեկաններն իրենց սիրական պէպելքն վրայ :

Երբ տառերեք տարու կըլլան, իրենց հասակակից գողները արդէն իսկ միտքերն կը գրաւէ :

Տասնութ տարեկան հասակուն մէջ՝ վիպական ամուսնութիւն մը կերպով :

Քսանթէկին՝ իրենց առաջին զաւակը կընդնշմարեն :

Երեսունհինգին՝ կը տիրին իրենց առաջին սպիտակ մազը տեսնելով :

Քառասունին՝ կը մաքառին իրենց երեսին կանխահա խորշումներուն դէմ :

Յիսուն տարեկան եղած ատեններն, անցեալը կը յիշեն :

Վաթսունին, ա՛լ իրենց թունկերովը միայն կը զգաղին :

Տրէյֆիւսի գործին զուարճալի կողմերը զոր բարիզեան լրագրութիւնը չի մոռնար երբէք, ամենէն հրատապ խնդիրներու մէջ իսկ :

Նախկին հարկւրապետին դատապարտութենէն ետք, ֆրանսացի սպայ մը որ Տրէյֆիւս կը կոչուէր, խնդրագիր մը ուղղելով պատերազմական նախարարութեան, արտօնութիւն խնդրեց անունը փոխելու : Եւ իր փափակին համեմատ . . . Բիքառ կոչուեցաւ : Հիմա՞յ որ Բիքառ գնդապետն ալ մեղաւորից կը նկատուի Տրէյֆիւսի . . . :

Հարաւային Ամերիկայի մամուլը խստիւ կը բողբէ՝ այդ նահանգներուն մէջ, գլխաւորաբար Ֆլորիտա, տակաւին ի գործ դրուող վայրագ դրութեան մը դէմ զոր գերեզմանաւի վերահաստատումը կը նկատեն իրաւամբ : Բանտարկութեան կամ թիարանի դատապարտուած անձերուն ուտեստի և ուրիշ ծախքերէն ազատ մնալու համար, տեղական կառավարութիւնը սովորութիւն ունի եղեր անուրդի հանել զանոնք և իւրաքանչիւրը իր դատապարտութեան ժամանակամիջոցին աշխատողները իրաւունքը յանձնել անհատներու : Այսպէս, գեռ վերջերս, չորս հարկւր երեսուն հոգի՝ էրիկմարդ, կին ու տղայ, սպիտակամորթ ու սեւամորթ, «վաճառել» են Ալաբամայի մէջ (Ֆլորիտա) 21,000 տոլարի, նահանգին ֆոսֆատի հանքերուն շահագործման աշխատողներու պայմանաւ : Ականատես մը Ուորթ լրագրին մէջ կը նկարագրէ այդ խեղճերը որոնք անասունի պէս կը գործածուին եղեր իրենց տէրերուն կողմէ, ոտքի կամ խարազանի հարուածներով :

ՄԻ ՄՆԱՔ ԵՐՔԷՐ ԱՌԱՆՅ ԺԱՄԱՅՈՅՑԻ
Քանի որ միմիայն 22 դուռի անհաւատալի գնոյ մը փոխարէն, նիքէլ, կոթէն լարուղ, ընտիր ժամացոյցներ կը վաճառուին Սեյվանեան միջերաւ նոցի մէջ, ի նաեւ խալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ճէփօնի վէքեալէի մէջ :
Սեյվանեան միջերաւնոցի մէջ կը գտնուին նաեւ ամեն ճաշակի և ամեն բաւկի յարմար, ոսկի, արծաթ, ոսկեպստ և նիքէլ ժամացոյցք, շղթայք և գոհարեղէնք ինչպէս նաեւ պատի և քոնսոլի բազմազան բանտիւններ :
12—12

PHARMACIE DE LA POSTE ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՔԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով : Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին :

Անգլիական և ֆրանսական սքեսիալիթներ : Թարմ հաճախից շուրեր, անուշահոտութիւնք եւն. Բնալուծական և մանրագիտական քննութիւնք : Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծառայողները :

Բժշկական ձրի խորհրդածութիւնք ազրատաց համար : 21—50

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷԺԻԲՄԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիններով :

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐ : 4—10

Ա. Լ. Ե. Թ. Ո. Ի. Ա. Ի.

Կ. Պրլայ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ Վճառատունէն Տեարք Յովակիմեան Եղարք այս ան լաւ հաստատուած են ի Գահիրէ և Մուսթի փողոցը՝ Լաթէսի գոհարավաճառատան դիմաց բացած են վաճառատուն մը որ կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն Ֆանիլա, գուլպայ և դանազան տեսակ ընտիր շապիկներ, օձիքներ, քեւնոցներ :

Ճոխ դանազանութիւն մարօքների, հոսեղիցներ, բու և արդուզարդի վերարբերալ ամեն տեսակ ապրանք : Շէֆիլթի հոշակաւոր սրտգլուտեայ գործիներ, անիլի, մկրաս, զմեյի ևն :

ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐ :

Գաւառներէն եկած յանձնարարութիւնք ճշդիւ և փութով կը կատարուին : 13—24

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԹԻ, ՇՐԱՏ ԱԶԱՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԻԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, չրջագգեստներ, ևն. մաքրութիւն, ճշգրտակամութիւն, և խիստ չափաւոր գին : 15—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՔԷՆ ԱՂԵՔՍՆԴՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Օմիւր		Կէս ուղ.		Օմիւր		Էքսորէս		Օմիւր		Էքսորէս		Օմիւր	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1, 2 4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1, 2 4գ.	առտ.	1 2 3 4գ.	առտ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	—	8 15	—	9 30	—	3 30	—	4 45	—	7 15	—	11 —	—
Պէնհա	»	8 —	—	7 49	—	9 32	—	10 15	—	4 47	—	5 29	—	8 32	—	12 35	—
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	—	10 30	—	10 55	—	5 45	—	6 7	—	9 30	—	1 44	—
	մեկ.	11 48	6 —	8 34	—	11 15	—	11 —	—	6 26	—	6 11	—	—	—	1 54	—
Տամանհուր	»	3 10	—	7 34	—	9 41	—	12 49	—	11 58	—	7 59	—	7 7	—	3 51	—
	մեկ.	3 10	—	7 34	—	9 41	—	12 49	—	11 58	—	7 59	—	7 7	—	3 51	—
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	—	9 15	—	10 45	—	2 30	—	9 40	—	8 7	—	—	—	5 50	—

ԱՂԵՔՍՆԴՐԻՈՅԷ ԳԱՀԻՔԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Օմիւր		Կէս ուղ.		Օմիւր		Էքսորէս		Խառն		Օմիւր		Էքսորէս		Օմիւր	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1 2 4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1 2 4գ.	առտ.	1 2 3 4գ.	առտ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	—	9 —	—	9 20	—	2 30	—	4 15	—	6 15	—	11 —	—
Տամանհուր	»	—	8 6	8 58	—	10 2	—	12 14	—	4 13	—	5 15	—	8 6	—	1 9	—
	ժամ.	—	9 12	10 28	—	11 —	—	2 39	—	5 43	—	6 10	—	9 40	—	2 56	—
Թանթա	մեկ.	6 15	9 16	11 20	—	11 5	—	2 49	—	6 30	—	6 14	—	—	—	3 6	—
	մեկ.	7 18	9 59	12 23	—	11 46	—	4 43	—	7 33	—	6 52	—	—	—	4 25	—
Պէնհա	մեկ.	8 30	10 45	1 35	—	12 30	—	6 25	—	8 45	—	7 35	—	—	—	5 50	—

ԳԱՀԻՔԷ-ՍԻԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՔԷ

ԿԱՅԱՐԱՆՔ			ԿԱՅԱՐԱՆՔ				
ԱՌԱՌՈՅ			ԱՌԱՌՈՅ				
ԵՐԵԿՈՅ			ԵՐԵԿՈՅ				
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		»	—	—
Ջակադիկ	ժամ.	1 34	8 54	Խամախիա	»	1 20	7 5
	մեկ.	1 44	9 4		»	—	—
Խամախիա	մեկ.	3 40	առտ.	Ջակադիկ	ժամ.	3 7	8 53
	մեկ.	—	1 —		մեկ.	3 17	9 3
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	Պէնհա	ժամ.	4 13	9 47
	մեկ.	—	—		մեկ.	4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35